# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

**31.03.2014թ. կնքված N «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով «Պետության կարիքների համար կապի ծառայության մատուցման» պետական գնման պայմանագրի**

«10» դեկտեմբեր 2015թ.

ք.Երևան

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ Դավիթ Բեգլարյանի, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ն ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Հարությունյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն՝ ի դեմս տնօրեն Անդրեյ Պյատախինի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող)՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 31.03.2014թ. կնքված N «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 2.4.4 և 7.3 կետերը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.1. Պայմանագրի ընդհանուր գինը 26.5 (քսանվեց ամբողջ հինգ տասնորդական) ամսվա համար կազմում է 262791666 (երկու հարյուր վաթսուներկու միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝ Պայմանագրի գինը 2014 թվականի համար կազմում է 114041666 (մեկ հարյուր տասնչորս միլիոն քառասունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ, 2015 թվականի համար՝ 119000000 (մեկ հարյուր տասնինը միլիոն) ՀՀ դրամ, 2016 թվականի 1-ին եռմսյակի համար՝ 29750000 (քսանինը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:»:

1.2 Պայմանագրի 7.4 կետում «238000000 (երկու հարյուր երեսունութ միլիոն)» թիվն ու բառերը փոխարինել «262791666 (երկու հարյուր վաթսուներկու միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց)» թվով և բառերով:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Պ ա տ վ ի ր ա տ ու** | **Կ ա տ ա ր ո ղ** | |
|---|---|---|
| ՀՀ կառավարության աշխատակազմ ՊԿՀ<br>ք. Երևան, Կառավարական թ.1 շենք<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչ.<br>ՀՎՀՀ 02505554<br>Հ/Հ 900011022085<br><br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ<br>ք. Երևան, Հր.Քոչարի 13/11<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ<br>ՀՎՀՀ 00930093<br>Հ/Հ 1150002075690100<br><br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԱրմենՏել» ՓԲԸ<br>ք. Երևան, Աճառյան 2<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>ՀՎՀՀ 02500052<br>Հ/Հ 163004038879<br><br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |